



Վիճակագրական ՄԱՍԻՆԵՆ ԵՂՈՒՄՅՈՒՆ — ԴՈՒՆԻՔԻ

“ՓԻՒՆԻԿ,Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոնմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ու սուս նստիւթիւններ. Հայոց գաղթային հասանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնա որոպես եզրագրասի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոտանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
 - 3.—Իրսական նորութիւններ, կես-ժամօք ժողովրդոց կեանքէն ու բարեքն մանր սխալ նութիւններ, հուշակաւոր եկրախոյզներու երկերէն բաղուած:
 - 4.—Եզրագրական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիս ամսեայ ընդհ. բարոյական կարգութեան վրայ հոմ ու ամիոպ տեղեկութիւններ:
 - 6.—Արեսա սմանքի եւ զաւառական թղթակցութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԵԱՆ

Եզրագրասի համար	Տարեկան	Փր. 10
»	Վեցամսեայ	» 6
Արտասահմանի համար	Տարեկան	» 13
»	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	բարձր 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային հոգեբանութիւն.—Ս. Ճ
 Եզրագրասիտաստիւն. (Սուէզի Զրանցքը)
 Յիւն գիտ.—Ս. ԲԻԻՐԱՏ
 Իրական կեանքէն (Նախօ)
 Վեժանի արուարձներ (Արգամ).—ԴԻՄԱԿ
 Մահաբանութիւն.—Ս. Օ.
 Ազգային Քրօնիկ.
 Հոկոյ ընտանիք մը.—Վ.Ա.ԶԷ
 Մանրագրութիւն.—Ս. Գ.
 Քարտրական կարգութիւնը.

Չեռագիրները եւ չեն գարծար: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր, կամակ, յարուած եւ բանանարգազին պէտք է զրկել առ Տնօր Ս. ԲԻԻՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **ՓԻՒՆԻԿ**
 INSTITUTION CENTRALE
 LE CAIRE



ԵԳԻՄՏՈՍ

ՏՄՐԵԿԱՆ... 10
ՎՆՑԱՄՍԵԱՅ 6

ԲԱԺՆԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է



ԱՐՏԱ յԱՅՍԱՆ

ՏՄՐԵԿԱՆ... 13
ՎՈՑԱՄՍԵԱՅ 7

ԿՈՎԱՅ
ՏՄՐԵԿԱՆ ԲՊԼ. 3



ՓԻԻՆԻԿ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

1 ՄԱՅԻՍ 1899

ԹԻԻ 3

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Եթէ ճշմարիտ է որ գիտակից տարակոյսը — ինչպէս ըսուեցաւ այս տողերուն մէջ իսկ — մտածողին անհրաժեշտ է յարաբերական ճշմարտութեան մը տիրանալու համար, թէ, կոյր կիրքերէ, — ինչպէս են՝ անձնական շահ, գոռոզութիւն, մտնուանդութիւն, այլազան հակումներ — մաքրուած, և, անդիտակից մտաւորական տարրերէ, — ինչպէս են՝ նախապաշարումներ, կանխակալ կարծիք, չափազանց երևակայութիւն — ազատագրուած մտածումով պէտք է վճռել, փորձուած և ուղիղ սկզբունքներու համաձայն քննութենէ յետոյ, գաղափարի մը կամ գործի մը նկարագիրը նախապէս որոշուած տեսակէտի մը նկատմամբ, ոչ նուազ ճշմարիտ է նաև թէ տարակոյսը իր չափազանցեալ ձևին տակ տարբազարիչ թոյնն է մանաւանդ գործող կամքին, և թէ, ընդհակառակը, կիրքը, մտածումին լոյսէն առաջնորդուած, կունենայ գերազանցապէս գործնական արժէք մը: Յաճախ, պատմական իրողութեան

մը — և, հեռագրական լուր մը զոր օրինակ մէկ մանրանկարն է ասոր — հանդէպ, ներքին բուն իղձի մը ճընշման տակ, մարդ տեղի կունտայ ընդունիլ ինչ որ համաձայն է այդ ըզպացումի շարժման: Սակայն, ապագայ նոր իրողութիւն մը, անփութութիւն կը հերքէ առաջին հաւատքը: Այս երեսոյթին կրկնութեան արդիւնքն է այն փորձառութիւնը որով մարդ տարակոյսով կը վերաբերուի լուրին ծագման կամ պատմողին արժանահաւատութեան մասին. կը քննէ անոր բարոյական արժէքը — թէ կարող է տեսնել իրողութիւնը այնպէս ինչպէս որ է ինքնին. որովհետև հազուադէպ չ'է իրերը գիտել մեր կիրքերուն, նախապաշարումներուն պրիսմակէն. թէ անկեղծ է իր զրոյցին մէջ: որովհետև քիչ ընդհանրացած չ'է գործածութիւնը այն առածին թէ խօսքը տրուած է մարդուն՝ իր մտածումը ծածկելու համար. թէ, վերջապէս այն պարագային ուր ան միջնորդի դեր մը կը կատարէ բուն սկանառեսին և իր

միջև, կը հետամանի որոշել թէ այս սկզբունքին ճշգրիտ կիրառութեան արդիւնքն է իր մէջ արտադրուած ատուգութիւնը նկատմամբ լուրին: Ահաւասիկ, անշուշտ, այն պարագաներէն մէկը ուր տարակոյսը, առարկայայտես — այսինքն վերաբերութեամբ ուրիշին — օգտակար է քըննադատին որոշ խնդիրներու մէջ:

Բայց ո՞ւր է իր օգտակարութիւնը, ենթակայապէս — վերաբերութեամբ սնհատական կոլին — ամուսած, չ'եմ' տեսներ զայն: Գիտակցութիւնը — ներքին աշխարհի գործերուն զիտութիւնը բառին յատուկ իմաստով — կ'սկսի ինքնավերլուծումով և իբր գրական արդիւնք միայն կունենայ ենթակայական տարակոյսը: Ասիկա հիւժախտն է բարոյականին:

La conscience, ce flambeau des grâces sataniques (Baudelaire)...

Գիտողութիւնը կը հաստատէ որ իր արժէքին վրայ տարակոյսը կ'արտադրէ հիւանդ ինքնատեցութիւնը և զիտներք թէինքնայարգանքն է շարժիչ ուժերէն մին յառաջդիմութեան. իր կարողութեանց վրայ անվստահութիւնը անհրաժեշտօրէն կը պարտաւորէ անգործութեան և աշխատութիւնը, շարժումը կեանքի օրէնքն է. խտէպի սկեպտիկ պատրանքի զգացումը կ'ընկղմէ հողին անտարբերութեան մը մէջ, ոչ առանց հեշտանքի թերեւս, բայց վտանգաւոր ապահովաբար: Որովհետև կը ցամքեցնէ անձուէր ներշնչումներու ազբիւրը. կը դադրեցնէ զգայնութիւնը ազնուական ու մեծ նպատակներու համար թրթռալէ: Արդ անվիճելի կերպով, այս չ'է եղած բնաւ գործող մարդոց հոգեկան վիճակը: Անոնք որ, ուրեմն, հոգմուտից են գրական գաստիարակութեան և որոնք կ'ստորադրեն հաւատուրաց այլ ողջամիտ ժիւլ լը Աէթրի գաղափարներուն, պարտին

առաջուց հաշուել գրական ճիւղին այս ապագայ աւերները նոր միտքերու վրայ և անոր կարեւորութիւնը վերածել իր անխուսափելի նուազագունին (*minimum*): Այս ճշմարտութիւնը պէտք է խարխիտ աննել զպրոցական ծրայիրներու — խօսքը երկրորդական վարժարանի վրայ է — կազմութեան համար:

Ընդհակառակը անոնք կիրքով լեցուն են ու հաւատքով բարխուն: Կիրքը, արդարև, ինչպէս ամեն բան, ինքնին չ'ընծայեր որոշ նկարագիր մը զնաստակարութեան կամ օգտակարութեան: Բնական ուժ մըն է: Նպատակին, գործածութեան եզանակին, պարագաներուն համեմատ կրնայ արտադրել իրարու տրամագծապէս հակառակ արդիւնքներ և, հետեաբար, ըլլալ օգտակար կամ զնաստակար:

Արդ պէտք է զիտել որ այդ ուժը, իր բնական ու բիրտ ձեւին տակ, յաճախ, աննշան շարժառիթով մը կը պայթի բուսն, անկանոն, յանկարծական կերպով և զնաստակար կը դառնայ: Անհրաժեշտ է որ, օգտակար ըլլալու համար, մտածումի լոյսէն առաջնորդուի, և որոշ սկզբունքներու գծած ուղղութեամբ հոսի: Այս իսկ է որ կը կոչուի վճռականութիւն: Այս ձեւին մէջ է որ կատանայ գործնական արժէք մը:

Նմանապէս, հաւատքը — գերազնիւ աստիճանը կիրքին — կը կազմէ կորսման արդիւնք մը: Գործունէութենէ սպառած ու ձախողանքներէ ջլատ, կամքը, հոն, անընդհատ կը վերանորոգէ իր ուժերը: Այս է որ կը կոչուի Յարատևութիւն: Երկակայութիւնը երկնեանց գոյներ կը քաղէ հոն կենդանացնելու համար ժամանակէն թարչամած խտէպը. և այս է որ կը կոչուի Հաստատումը-տութիւն, մէկ իմաստով:

Այսպէս է որ, զազափարը, իրականութենէն ծնած կը վերամանէ իրականութեան մէջ: Այս կերպով է որ կը կատարուի գազափարին յամբ, աստիճանական, անընդհատ ձեւափոխութիւնը առարկայական նիւթականութեան — ուրիշ բառով, Գործի:

Արդ կարևոր է գիտել որ այս երկու անհրաժեշտ տարրերը — լուսւոր կիրք և կրթուած հաւատք — ներկայ են հոն ուր առողջ, արինային, հզօր խառնուածք կայ. և, ընդհակառակը սա ֆրասակար վիճակները — ինքնատարակոյս ու անտարբերութիւն — ընկեր են անարին ու տկար ֆիզիքական կողմութեան: Ուրեմն, եթէ կրթական գործին մէջ,

հաստատապէս առաջադրուած է իրական նպատակ մը, պէտք է թափանցուիլ այս ճշմարտութեամբ զոր կը հաստատեն փորձառութիւնը և իրողութիւնները:

Քայց մանաւանդ քիչագատութեան մէջ պէտք է ընդունիլ զայն չը գատապարտելու համար այդ թանկագին ու գործնական արժանիքները կիրքի, եռանդի, հաւատքի որոնց ապացոյցը տուաւ ժողովուրդը, և որոնք սակայն զուրկ ճարտար նաւավարէ ու ճշգրիտ ուղեցոյցէ, այս ընդհանուր ալեկոծութեան մէջ նաւը ընկղմելու վտանգը փութացուցին:

Ա. Ճ.

Ե Գ Ի Պ Տ Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Ս Ո Ւ Է Չ Ի Չ Բ Ա Ն Յ Ք Ը

Սուէլի ջրանցքը բացողին մահը բաւական անտարբերութեամբ դիտուեցաւ եւրոպական և մինչեւ իսկ Ֆրանսայի հասարակութեան կողմէ, թէեւ Լէսէբո ժ.ժ. գարու երկրորդ կիսուն ամենէ հոյակապ անձնաւորութիւնն եղած էր թերեւս: Ամեն պարագայի մէջ ի կատար հանեց նա այնպիսի գործ մը որուն կարեւորութիւնը իրապէս տիեզերական է և որուն քով շատ պիտի նսեմանան Պիզմարքներու, Մօլթրէններու եւն. մեծագործութիւնները՝ ապագայ սերնդեան առջեւ: Չարմանալի երևոյթ մըն է որ Լէսէբո՝ առանց մեծ մարդ մը ըլլալու՝ մեծ գործեր կատարեց: 1869ին ջրանցքի բացման մեծաշուք հանդէսներու պահուն՝ բովանդակ եւրոպա կը խոնարհէր Լէսէբոի հանձարին առջեւ, ոմանք Քրիստոսփոք Գորովոյսին հետ կը բազադատէին զանի, ուրիշներ պարզապէս մտայի

և ճարպիկ մարդ մը կը նկատէին. սակայն կը թուի թէ ճշմարտութիւնը այս երկուքին մէջտեղն է: և իրաւի, ջրանցքի շինութեան պատմութիւնը արդարացուց այս քիչ մը խիտա փատաստանը:

Լէսէբո շատ ինքնատիպ ասպարէզ մ'ունեցաւ, պարագաները զօրեղապէս օգնեցին իրեն ի գործ դնելու իր գազափարները որոնց հետեւածքը յայտնի է թէ չի կրցաւ նախաստեղծ իր երիտասարդութեան ժամանակ երգիպոտսի մէջ ծառայելով, զազափար ունեցաւ կարմիր ծովը միացրնելու Միջերկրականին հետ, զազափար որ արդէն փոքր աստիճանով մը գործադրուած էր փարաններու օրով Նեղոսի մէկ ճիւղին միջոցաւ, և որու իրագործման համար ի զուր երազած էին շատ մեծ միտքեր, ընդ որս և հարօլէնն Ա:

1848ին երբ Լէսէբո ֆրանսական

գործակառարի պաշտօնով Սպանիա կը գտնուէր, ծանօթացաւ Մօնթիթօ կոմսուհիին և անոր աղջկան հետ որ այնուհետեւ եղաւ Էօփէնի կայսրուհին. այս վերջինն էր որ խոստում՝ առաւ իր ամուսինէն՝ մինչեւ վերջը պաշտպանելու Սուէզի ջրանցքին ձեռնարկութիւնը, թէեւ Լէսէրս միշտ սիրով չ'մնաց Ն'աբօլէոն Գ.ի հետ։ 1849ին Հոամի գնապանութենէն ետ կ'անչուելով Լէսէրս ընդ միշտ թուրաց քաղաքական ասպարէզը և այս կիսովին ակամայ անգործութենէն օգտուելով՝ խորհեցաւ պեղել Սուէզի ջրանցքը։

Ի սկզբան գործը շատ գէշ գնաց՝ Անգլիացիներու ուժգին ընդդիմութեան և դրամի պակասութեան պատճառաւ, և մինչդեռ Լէսէրս ամեն կողմ՝ ինկած էր դրամ՝ ճարելու համար, ահա՛ ի գէշ ժամու վրայ հասաւ Միացեալ Նահանգաց քաղաքային պատերազմը որ հարստացուց Իսմայիլ Փաշան, Լէսէրսի բարեկամը։ Այն ատեն Իսմայիլ որ միշտ թուատաձեռն եղած էր, սկսաւ աջ ու ձախ գրամ նետել, և շնորհիւ Պօրէլ և Լափալէ ճարտարագէտներու աջակցութեան՝ ջրանցքին շինութիւնը աւարտեցաւ և 1869ին բացման հանգէսը կատարուեցաւ մեծ շուքով։

Սակայն ջրանցքը խեղճի բերաւ Իսմայիլ Փաշային և Անգլիոյ նախանձը գրգռեց։ Իսմայիլի ձեռքէն առնուեցաւ իր նաւատորմիցը և Եգիպտոսի անկախութիւնը սահմանափակուեցաւ. մինչդեռ միւս կողմէն Սուէզի ջրանցքին բաժնետէրերը, որոնք տարիներէ ի վեր կիսովին կործանած էին և զլիստորապէս կը բողկանային Բարիզի դերահաւան ու միամիտ գոնապաններէ և խոհաբարուհիներէ, մէկէն ի մէկ հարստացան. բաժնեթուղթերու արժէքը հընգամապատիկ վրայ դրաւ։ Լէսէրս իր

վայելած այս ժողովրդականութեան շնորհիւ յաջողեցաւ՝ տասը տարի յետոյ՝ դիւրութեամբ գրամ գտնել նոր պարանոցի մը՝ այն է Բանամայի պեղման համար։ Միայն թէ այս անգամ՝ հանգամանքները բոլորովին տարբեր էին. գործը պէտք եղածին պէս ուսումնասիրուած և հաշուի առնուած չէր։ Ահապէն գումարներ փճացան, Լէսէրսի համբաւը կտրեցաւ և ժողովուրդը փոխանակ «Նոր Գոլոմպոս կամ Մեծ Ֆրանսացի» մակդիրը տալու, սկսաւ Անէրօֆ մը կոչել զայն։

Եթէ Լէսէրս չ'ստիպեց երկրագունտը իր թաւալական շարժման ուղղութիւնը փոխելու, ապահովապէս յեղաշրջեց կեանքը սոյն երկրագնդին վրայ։ Սուէզի ջրանցքին պեղման հետեւանքները շատ ու շատ գերաշանցեցին Լէսէրսի և 1850էն 1899՝ ապրող պետական մարդերու ու գիտնականներու ամենէն յանդուգն երազները։

Ամենէն առաջ այս «Մեծ Ֆրանսացին» որուն հայրենասիրութիւնը ամեն տարակոյսէ վեր է, իր հայրենիքը հարստացնելէ և զօրացնելէ աւելի՝ նուազեցուց անոր աղքատութիւնը քաղաքական տեսակէտով և կործանեց Ֆրանսան։

Բանամայի ձախողուածը ժողովրդական ինսուլտութեան 230 միլիոն ֆրանքի մօտ գումարը կուլ տուաւ. Եգիպտոս Ֆրանսայի ձեռքէն ելաւ Անգլիոյ միջոցաւ որ՝ այս երկրին մէջ տեղաւորուելու համար՝ սկսաւ խտիվէն գնել անոր ունեցած Սուէզի ջրանցքին առանձնաշնորհեալ բաժնեթուղթերը. ի վերջոյ, որովհետեւ Սուէզի ջրանցքին շնորհիւ ամենէն աւելի ծովային վաճառականութիւնն էր որ զարգացաւ, Ֆրանսա որուն ծովային-առևտրական շարժումը այնչափ մեծ չ'էր, համեմատաբար կորսնցուց միջազգային հաշ-

ուեկչոն մէջ: Ընդհակառակն Անգլիա ահագին շահեր ունեցաւ Սուէզի ջրանցքին բացումէն, թէև Լէսէրս միտքը գրած էր շնջել անոր առևտրական գերակշռութիւնը՝ վերտին փոխադրելով վաճառականութիւնը գէպ 'ի Միջերկրականի նաւահանգիստները՝ որոնք երեսի վրայ ձրգուած էին Ամերիկայի և Հնդկաստանի ճամբուն գիւտէն 'ի վեր: Արևելեան Հնդկաստանի և Աւստրալիոյ կարևորութիւնը տնտեսապէս աւելցաւ: Եզիպոստէն վերջ Անգլիա գրաւեց Ափրիկէի կէսը զոր հարուստ և բարգաւաճ գաղթականութեանց վերածելու վրայ է: Անգլիոյ վաճառականական նաւուց թիւը՝ որ միւս բոլոր առևտրական նաւերու կէսէն նուազ էր, հիմա անոր երկու երրորդը կը կազմէ և անգլիական լեզուն կը տիրէ ամենուրեք: Չինաստան և Ճաբոն երբէք չ'պիտի ունենային իրենց այսօրուան վիճակը՝ եթէ Սուէզի ջրանցքը բացուած չըլլար: Իրենց բոլոր յառաջդիմութիւնը կը պարտին այս ջրանցքի գոյութեան որ զիրենք մտակոյց Եւրոպայի: Սուէզի ջրանցքին օգուտը տարածուեցաւ մինչև Հիւս. Ամերիկայի արևմտեան եզերքները: Կենդանութեան սերմեր որ փոսեց մինչև արևելեան Սիպերիոյ ասիանց ամայի և անմարդաբնակ անապատներուն մէջ և յեղաշրջեց Ռուսիոյ գարաւոր վաճառականութիւնը Չինաստանի հետ:

Բայց այս ամենը ոչինչ են բազգատմամբ այն անտեսական ու առևտրական յեղաշրջումին զոր յառաջ բերաւ Սուէզի ջրանցքը՝ նաւարկութեան տուած զօրաւոր մղումով: Ջրանցքին բացումէն 'ի վեր նաւաչինութիւնը անբար յառաջդիմութիւններ ըրաւ՝ շոգենաւներու տարողութեան և արագութեան տեսակէտով ինչպէս նաև հանքածուխի սպառումը

նուազեցնելով: Առաջ, օրինակի համար, 16 քիլոկրամ՝ բուրբը խրիմէն Անգլիա տանելու 10 ֆրանք փոխադրութեան ծախք կ'երթար, մինչդեռ հիմա նոյնչափ բուրբը 10 սանթիմով Հար. Ամերիկայէն Եւրոպա կը բերուի: Բնիկ երկրին մէջ հասցնելէ կտա՛ կտա՛ պատրաստելէ աւելի շահաւոր կը նկատուի Արևել. Հնդկաստանէն (Սինթիլեաներէն) գնել ցորենը. Ամերիկայէն կտա՛ Հար. Ափրիկէէն՝ ճարպը, բուրբը, Աւստրալիոյէն՝ միսը և կարագը, Քալիֆօռնիայէն՝ պտուղներ և այլն:

Ընդհակառակը, հանքածուխի, մեքենաներու և քիմիական ուլ և ուլ արտադրութեանց աժան գնով փոխադրութիւնը՝ զիւրութիւն ընծայեց երկրագնտի ամեն կէտերուն վրայ հաստատելու գործարաններ, մինչև արևադարձային երկիրներու մէջ: Երգենաւային ընկերութեանց զեղչեալ սակագիւնները՝ ճամբորդներու փոխադրութեան համար՝ տանապատկեցին գաղթային շարժումը: Նոր գաղթականութիւններ սկսան կազմուիլ նրմանը չ'տեսնուած արագութեամբ և նոյնքան արագութեամբ հին գաղթականութիւնները զարգացան քաղաքակրթութեան մէջ: Ասիկց քսան տարի առաջ Միացեալ Նահանգներու երեք քառորդ մասը գրեթէ անծանօթ երկիր մըն էր ուր կը թափառէին վայրենի Հնդիկներ. այսօր այդ միևնոյն ցամաքին մէկ երրորդ մասը մշակուած է և իր արտադրած ցորենը շոգենաւներով Եւրոպա կը փոխադրուի:

Յ Ի Շ Է Զ Ի Ս

ստ Գ. Ս.

Յիշէ՛ զիս եթէ զով օգ, եղկ արև
Քեզ տանին այցել Աւերակը(*) սև
Որ ծովահանաց բըլուրին վըրայ
Պառկած՝ հսկայի քուն կը քընանայ.

Անխօսին երբ խօսիս,
Այն պահուն յիշէ՛ զիս:

Յիշէ՛ զիս եթէ բըլէն իջնելով՝
Գընաս ըզմայլուն, դիտել կապոյտ ծով.
Խողրեմ՝ քիչ մը կանկ ա՛ն ճամբուդ վրայ,
Հոն ուր Ղևոնիկն իմ կը քընանայ.

Շիրմակին երբ հակիս,
Տրամագին յիշէ զիս:

Յիշէ՛ զիս եթէ նետուելով մաւակ,
Ալեակներուն հետ մրմնջես նըւագ.
Քանի՛ հեռաման անիս և իր ժըխոր,
Օրօրի հոգիդ՝ Քաղցր անցեալին խոր.

Ծովուն հետ երբ խօսիս,
Ալեկոծ՝ յիշէ՛ զիս:

Յիշէ՛ զիս եթէ վերջալուսին դէմ
Բազմած ընկերաց հետ զըւարթադէ՛ս
Խովէն թըրջըւած պատշգամին վըրայ,
Պալպես բաժակներ, զըլուխը երեքայ.

Մրտիդ հետ երբ խօսիս,
Մրտագին յիշէ՛ զիս:

Յիշէ՛ զիս եթէ զիշերի, մինակ,
Ըստուերի մը պէս մըխիս ի պուրակ.
Փարիս աչերո՛ղ արծաթ լուսնակին,
Լըսես մրմունջը՝ առուին, խօսնակին.

Լուսնակին երբ նայիս,
Մութին մէջ յիշէ՛ զիս:

Յիշէ՛ զիս եթէ վերջ Նոյեմբերի,
Մահամերձ երկիրը տարուբերի.
Ժախանէ ջր՛նռն ու շնչովն ուժգին՝
Թօթափի անրև, սարսափի հոգին.

Մըտայած երբ յուզիս,
Դողագին՝ յիշէ զիս:

(*) Ա. Կասա, ու է հին Սախանը:

Յիշէ՛ զիս, եթէ սեզանին բոլոր
Թաւալես արբշխ աչերդ մոլոր.
Հոն՝ պար, երգ, ժըպիտ, համբոյր ու սար.
Փանք՝

Բարբրաստ ան.հահ խոստանան Քեզ կեանք.

Խշշոյթէն երբ զգուլիս,
Պահիկ մ՛ալ յիշէ՛ զիս:

Յիշէ՛ զիս... ցաւի ահիսներ, ահեր՝
Ճակասս են պեղեր, արիւնս են քամեր.
Հոգիս՝ դիակ մը, մարմինըս՝ դագաղ,
Բանտը՝ գերեզմանս, ո՛վ լայ զիս, աւա՛ղ.

Դու՛, հատոր իմ սրտիս,
Դու՛ միայն յիշէ զիս:

Յիշէ՛ զիս, այո՛, յիշէ՛ քու Բիւրատ,
Որու սիրտն՝ անննգ, սէրն է անարատ.
Ան սր ցերեկով նետուած է զնդան,
Գիշերով շրջի դի կիսակենդան.

Մտերմի սիրտ ունիս,
Գլխունի՛ս, յիշէ՛ զիս:

Յիշէ՛ զիս, յիշէ՛ երբ Նիւթէն ՚ի վեր
Քեանեն ըզքեզ ճընորքին հովեր.
Կամ երբ Նիւթին մէջ ընկած ընկղմած՝
Կ՛ապշիս դու կեանք մը Մահէն մըթամած.

Երբ խոկաս ու զրաւիս,
Գլխունի՛ս, յիշէ՛ զիս:

Իսկ երբ ինձ հըպի Մահուան ծեռքն երկաթ,
Պաղ քրտանց հեղեղ հոսէ իմ ճակատ.
Լոյսն իմ բաց աչքին, բոցն իմ խոց սրտին,
Մարին ըսպառին շնչո՛ղ ցրտին.

Երակներուս մէջ արիւնը սառի.
Եւ կարկամ լեզուս ա՛լ չը բարբառի.
Մարմնիս սառուցէն, գարշ հոտէն, աւա՛ղ,
Խոս տան ծտարներ, զըլաման դագաղ.

Երբ ո՛չ մար, ո՛չ հայր, ո՛չ եղբար, ո՛չ քոյր,
Ո՛չ կին, ո՛չ որդի տալ վերջին համբոյր,
Քանի մ՛անտարբեր մեռելաթաղներ
Նետեն զիս փոս մը զոր մոր են պեղեր.

Զպզիբ առարկայ դառնամ ամբոխին,
Միջի ուր համին տալ զիս սև հողին.
Տեղայ՛ խեղճ գլխուս անէծքի կարկուտ,
Անո՛նս ըսպանէն ժամանակն անգուլթ.

Ձիս մի հողակոյտ երբ նըշահակէ,
 Ձոր աճնն անցորդ կը նշաւակէ,
 Քնարանիս եզերքը կամաց կամաց
 Քուսնին փուշ, ծաղիկ, գարդերը շիրմաց,
 Երբ գեանին ներքեւ, խորն հողին խոնաւ
 Որդանց բանակը խուժէ սըրարշաւ .
 Ղափէ՛ Ղափլափէ մարմինն իմ բոլոր .
 Ափ մ'աճիւն, արծն մի քանի ոսկոր
 Թողլով իմ կեանքէս մընացորդ միակ
 Եւ սիրակամիդ սիրոյն յիշատակ . . .
 Յայնժամ, ո՛վ հաստոր սրախս և հոգւոյս,
 Որ աչքէս հեռի, բայց աչքիս ես լոս .
 Եթէ կը ցանկաս որ ննջեմ հանգիսս,

Ծոցը կայանիս — Կայս՞ն լըռանիսս —
 Յիշէ, զիս, յիշէ, և մի մոռանար,
 Քու մըտերիմը, որ սիրեց Քընար .
 Սիրեց ինչ որ էր գեղեցիկ, բարի,
 Ինչ որ նշմարիտ էր և անթերի .
 Թէ ո՛չ, մի յուսար որ պրծիս ձեռքէս,
 Ըզքեզ հալածող ուրուականն եմ ես .
 Գիշերի, մինչ քունն անուշիկ, հանդարտ,
 Գրկէ գքեզ, կուգամ քեզ դէմ մղել մարտ .
 Սե՛ւ ու սոսկալի երազով սանջեմ՝
 Ամբողջ էութիւնդ, ե՛ս որ ոչինչ եմ :

Ս . ԲԻԻՐԱՏ

Ի Ր Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Է Ն

(Ե Ա Կ 0)

Ա .

1890ի Յուլիսը՝ խեղդող ցերեկներ
 ու յգի գիշերներ ունեցաւ Մարաշի
 համար, տաքէն՝ քաղաքացիք կանուխ
 ելած էին բարձր ամառանոցները .
 վախէն՝ — բարդուած տուրքերուն ան-
 շուշա — շատերը քաղաքը թողած ու
 գիւղերը փախած էին: Գում-Գարուի
 ցոյցը՝ սարսափ սփռած էր ամեն
 տեղ: Վայրկեանէ վայրկեան կ'ըս-
 պատուէր անոր հակահարուածը՝ հա-
 յաբնակ քաղաքաց մէջ ալ: Մարաշ,
 իբրև ամենամերձ գրացին սպասամբ
 և խեռ Ձէյթունի, պաշարման վի-
 ճակի մէջ գրուած էր. հայերը — սո-
 վորաբար զբօսասէր ու շաղուող —
 քաշուած էին իւրաքանչիւրն իր տան
 անկիւնը, ո՛չ ոք կ'իշխէր գուրս ել-
 նելու փողոցները, որ աւերակի մ'ե-
 րևոյթը կուտային այն գեղեցիկ քա-
 ղաքին:

Այս ընդհանուր անտուգութեան
 մէջ, գէպք մ'եկաւ չըջեց իրերու
 կարգը: Եեհե՛ր-Տեհե՛ի (Մարաշի հա-
 յաշատ թաղը) մէկ անծանօթ փողո-

ցի անկիւնը կը գտնուի կիսամեռ մար-
 մինը սահմիկ ու մուխոտնոց թուրքի
 մը, որ քանի մ'օր առաջ սպառնա-
 ցած էր Հայերուն . . . Մարմնին
 վրայ քանի մը վէրքեր կային դա-
 շունի, խոր ու լայնաբաց: Բերին
 կառավարութեան պաշտօնատան մեծ
 — գրան առջև դրին, քիչ յետոյ ան-
 չընչացաւ, գիտիլ տարին, թաղեցին .
 թաղուէր կատարուեցաւ սակայն ո՛չ
 առանց նշանակիչ ու սրտայայտ ցոյ-
 ցերու: Մարդասպանը Հայ կը կար-
 ծուէր, թէև ոմանք ազգականներու
 միջև գոյաւթին ունեցող ցեղային
 թշնամութիւններու հետեանք կը հա-
 մարէին զայն. ինչ որ է, այդ միտկ
 դէպքը պատրուակ մ'եզաւ, Մարաշի
 կառավարիչ Սալիհ բաշային ձեռքը՝
 անմիջապէս քաշելու Հալէպի կուսա-
 կալին հետեանք հեռագիրը. « Հայերը
 կառուցան, ցերեկով սպաննեցին . . .
 « Պէյը, անյապաղ հրամաննիդ . . . » Պա-
 տասխանի տեղ՝ ինք եկաւ Արիֆ բա-
 շա — այս էր կուսակալին անունը:

Սարսափն երթալով կը սաստիկանար. ցերեկը, շուկաները գոց, փողոցներն՝ անմարդաձայն. առետուրի քաղաք կար ու արուեստաւորներու գործաւոր: Այսպէս անցան, մէկ, երկու, երեք օրեր, և լուսեցաւ թէ՛ կուսակալն եկած է Մարաշի մարդահամարն ընելու համար, և իրաւ էր. նախապէս այդ պէտք էր, հասկընալու իսկական թիւը՝ ազգաբնակութեան. և ծրագիրը գործադրելու ազահովութիւնն ունենալու համար: Կառավարութիւնը ցաւելով ստուգած էր թէ՛ Մարաշի մէջ 8800 տուն կար, և թէ՛ հայ և թուրք բնակիչները հաւասար էին թուով միայն 1 Հայի առաւելութեամբ:

Հծծին մ' ինկած էր ժողովուրդին մէջ. ամէն մարդ, կիներն ալ, զեռաստի աղջիկներն ու զստամ պառուներն անգամ, ինքնապաշտպանութեան խօսքեր կ'ընէին:

Քաղաքին հրահասակողը, Ախրը Տաղի (Սև ըն) ոտորոտէն կը բխին, սևիներու և սօսիներու տակէ զանազան աղբիւրներ, որոնք Քառասուն Ակունք (Գրբդ կէօզ) կը կոչուին. այդ վայրը՝ քաղաքացիներուն սիրական զբօսավայրն է, չըջապատուած կոր ու երկայն բլուրներէ. ստուերախիտ ծառերու մէջէն այդ աղբերակները կը հոսին և իրարու միանալով կը կազմեն վտակ մը, որ կը բաւէ դարձրնելու բոլոր ջրազացիներն ու իր վճիտ ու սառուա ջուրը բաշխելու ամբողջ բնակութիւններուն: Եոյն այդ զբօսավայրին մէջ՝ Սալիհ բաշա չըքեզ հայկերոյթ մը կուտար Արիֆ բաշայի, կոչնական սենեակով Հալէպի ու Մարաշի կարևոր պաշտօնեաներէն մէկ քանիները: Յուլիսի վերջին ուրբաթն էր: Բոլորակ աւազանին շուրջը շարուած, կը խմէին պապ ջուրին մէջ դրուած սրուակին օղին: Ախրը Տաղի գագաթէն անցաւ

մարը մտաւ արեւը. զովուկ հով մը փշել սկսաւ սօսիներուն մէջէն, աւազանին երեսը՝ թէթե խորշովիկ մ' առաւ, բաշմականներուն զէկքերը՝ ալ չ'էին կարգացուեր. մութը տակաւ կը թանձրանար: Արևելեան երգերը կը հնչէին, նուագածուններուն խումբը հեռուէն, 30 տանաչափ հեռուէն կը մանակցէր երգերուն: Հոս, թուրք պաշտօնէութիւնը, — կուսակալէն մինչև յետին բարապանը — ինչոյքի ու խենեշ հաճոյքներու մէջ թաղուած, կը խմէր օղին ու գինին, ժողովուրդին աշեան գինը. անդին՝ ժողովուրդը, սարսափահար, յուսահատ, խելացնորած, գոյի ու չ'գոյի կոփը կուտելու կը պատրաստուէր:

Գիշերն առաջացած էր, բազմականները մէկիկ մէկիկ քաշուեցան... մնաց միայն կուսակալը, կառավարչին, Միւֆիթին ու Գաարին հետ. քիչ յետոյ, այս երկու վերջինք ալ մեկնեցան. ու մնացին միայն Արիֆ ու Սալիհ, երկուքն ալ զուարթ, շատ զուարթ, գինովութեան մտոցնող ու թմրեցնող տպաւորութեան տակ: — Արիֆ սկսաւ.

— Հիմայ ինչ կ'ըսես, ընե՞ք այս բանը:

Ես պատրաստ եմ, բաւական է որ Ձեր պաշտպանութիւնը վայելիմ:

— Է՛հ ուրեմն, սկսի՛նք:

Ասոր վրայ զգուշաւոր ու կասկածատ նայուած մը կը դարձնէ շուրջը, ծառերուն լրտեսութենէն վախնալու շարժումով մը. քիչ մը հեռուն, ծառին տակ կեցող պահակեր-ղինուրին դառնալով.

— «Գնա՛, կ'ըսէ, հեռագրատան տընօրէնը կանչէ՛:

(Շարունակելի)

ՔՄԱԾԻՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

(Ա Ր Գ Ա Ս)

Նեպուկի մը պէս ճապուկ ու սուղոսկուն՝ ամեն քարի տակէն կ'երնէ, ամեն տեղ կը սպրդի Արգամ: Դասակարգի պայմանադրական խնդիրներու դէմ՝ ընդվզող նկարագրով մը օժտուած 'ի բնէ' ընկերային ամեն խաւերու, ամեն շրջանակներու մէջ կը մտնէ համարձակ, ուր հաւատար յաջողութեամբ ցոյց կուտայ փորձ կենցաղագէտի մը հազուագիւս ձիրքերը և իր դիւրահաղորդ բնասրութեան շնորհիւ կը յաջողի մտերմական սիրայօղ կապեր ու համակրութիւններ հաստատել ինչպէս բարձր և միջնակարգ՝ նոյնպէս և խոնարհ դասակարգի պատկանող անձերու հետ:

Սալօնի մարդ ու ժողովուրդի մարդ միանգամայն՝ Արգամ:

Այսպէս երբ ազնուաշուք հասարակութիւն մը հետ շնորհալի բարեւ մը կը փոխանակէ քաղաքավարական անստոգիւս շարժումներով մը, կամ սեզանաւորի մը ականջն 'ի վար կը փոփոսայ օրուան սակարանի սպառնական ելեէջներուն վրայ, կամ գարիզեան վերջին մէկ վէպին առթիւ սրամիտ քննադատութիւններու հեղեղ մը կը թափէ վիպամոլ բարեկամի մը դուռնին 'ի վար, կամ գէնընկեցութեան և հայկական հարցին միջև եղած առընչութիւնները մասնանիչ կ'ընէ դիւանագէտի հովեր դասող իմաստակի մը, բնաւ չի քաշուիր անդին իր կօշկակարէն հինգ զրջ փոխուղելու, ողբքալի խօսքերու ու խօսատուններու տարափի մը սակ խեղդելու՝ պայմանաժամը հասած մուրհակ մը ներկայող պահանջատիրով լրբենի սպառնալիքները, և կամ՝ բար-

թի մը քիֆէր դարձնելու առաջին հանդիպող ծանօթի մը հետ:

Իր ճկուն ու դիւրաթեք խառնուածքին կը միացնէ Արգամ՝ այնպիսի զբարթութիւն մը որ աշխարհիս բոլոր աղէտները վայրկեան մը իսկ չեն կրնար մթաղնել իր պայծաս ճակատը կամ՝ տիրութեան փոթ մը գծել իր յարածպիտ շուրթերուն վրայ: Մանուկի մը չափ անասորէր ու անփոյթ կային ու չկային նկատմամբ՝ միշտ միևնոյն զուարթութիւնը ունի մինչև իսկ երբ իր դրպանը չի վայելեր Միլիտի մը ներկայութիւնը: Իսկ եթէ երբեմն՝ տխուր հանգամանքներու ու պատշաճութեանց հարկին ներքև՝ ստիպուի բռնադրօսիկ լրջութիւն մը կեղծել կամ՝ թախմալից արասայայտութիւն մը տալ իր գէկքին, դիւրին է նշմարել ճշուած ժպիտն որ կը կայծկլատայ իր աչքերուն ու շուրթերուն վրայ՝ պատրաստ դուրս պոսթկալու առաջին առթիւ: Ահա՛ այս պատճառաւ Արգամ, թէև ո՛չ միշտ բազդին շնորհներով նպաստաւորուած, թէև զգայուն ու բարի, մինչև այսօր չ'է կրցած բերանել թէ ինչո՞ւ համար լուրջ ու ախուշ մարդեր գոյութիւն ունին աշխարհիս վրայ որ ո՛չ թէ ցաւերու կայան մը՝ այլ յարազուարթ ինզութեան եզեմ՝ մըն է իրեն համար:

Թէև բնութիւնը քիչ մը ժլատ գտնուած է իր շնորհներուն մէջ Արգամի նկատմամբ, սակայն ասոր փոխարէն օժտած է զանի մտքի այնպիսի դերագանց ձիրքերով որ համակրելի կ'ընեն զինք իր ապրած միջավայրին ամեն դասակարգներուն առ-

հասարակ և աչք գոցել կուտան մի քանի մանր մունր թերութիւններու որոնցմէ զերծ չ'է Արգամ՝ իբր մարդ:

Երէք բան կայ որոնց համար պաշտումի չափ սէր կը աածէ Արգամ՝ գրականութիւն, կին և ծաղիկ: Լեզուանի ու սրամիտ՝ անվիճելի ձեռնհասութեամբ կը մշակէ իր նախասիրած գրական սեռը, այն է կնոջական իրոնիկ՝ որու համար անսպառ հոնք ունի զուարթ սրախօսութիւններու, նրբամիտ ակնարկութիւններու, զունագեղ ու համեղ բացատրութիւններու և հանճարեղ գիտօրու, թէև ստեղծ — ինչ որ մեղադրելի թերութիւն մը չ'է ըստ «մանց» — իր քրոնիկներուն վրայ կը ձգէ այնչափ թափանցիկ քօզ մը՝ որուն ներքին կընդունամարտին Աստղիան զգլխիչ հրապոյրները որոնք մեղքի ու փորձութեան ճամբան կը բանան կեանքի անփորձներու առջև:

Այն օրը որ ծաղիկ չ'ունի Արգամ՝

իր լամբակին վրայ՝ աշխարհ աչքին մութ կ'երեւի ու կարծես ամօթի պէս բան մը կ'զգայ առանց ծաղիկի փոքրց ելնելու կամ՝ այցելութեան երթալու՝ մանաւանդ բարեկամուհիներու որոնց հանգիպելէն այնչափ հաճոյք կ'զգայ ծաղիկը կուրծքին՝ որքան կը խորշի ու կը ստուկայ հանգիպումէն կարգ մը մարդոց որոնք չ'ես զիտէր ինչ առած են իրեն որ չեն կրնար առնել:

Այսպէս Արգամ՝ գրականութիւնը կը սիրէ կնոջ համար, ծաղիկը կը սիրէ դարձեալ կնոջ համար:

Բայց չունի Արգամ՝ իտեալ մը որուն համար պարտաւոր ըլլայ զոհել մինչև իսկ իր սիրական . . . ծաղիկը: Ապահովապէս ունի, սակայն կը թուի թէ այն կարգի իտեալներէն է որոնք կամքէն անկախ պատճառներով՝ միշտ իտեալ մնալու սահմանուած են:

ԴԻՄԱԿ

Մ Ա Հ Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Սուտանի վերջնական գրաւումը, որ Քիչնէր փաշայի յազմութեան փառապասակը եղաւ, և այս առթիւ խաւարակուռն Ափրիկէի այդ կըտոր մը անկիւնին շուրջ յարուցուած միջազգային խնդիրները՝ որոնք մազ մնաց եւրոպական խաղաղութիւնը պիտի վրդովէին և արեան գնով բարձրացնէին (ինչ կ'արժէ տէրվիչներու արիւնը) քաղաքակրթութեան գրօշը այդ խաւարամած և կիսավայրենի երկրին մէջ, նոր շահեկանութիւն մը կ'ընծայեն Սուտանի վերաբացման պատմութեան և առիթ կուտան մեզ մի քանի հակիրճ անդեկութիւններ հազորդելու մահստիութեան վրայ որ սերտիւ կապ-

ուած է այդ պատմութեան հետ, տեղեկութիւններ որ կը յուսանք թէ կարեորութենէ զուրկ չ'են նկատուիր Փ/ոնիկի ընթերցողներուն կողմէն:

Յամին շնորհաց 1882, չ'գիտեմ՝ ո՞ր ամսուն, այն ինչ խաւարը սկսած էր պատել Սուտանի հորիզոնը, ահա երկինքին վրայ կ'երեւի գիտաւոր ասաղ մը՝ հրաշալի և լուսապայծառ, զոր բնիկները կը նկատեն իբր գուշակ Մահիսի էյ Մուրթագիւրի գալստեան և քուրթ (եգիպտական) կառավարութեան մօտալուս կործանման:

Ո՞վ էր այս երանելի Մեոիան:

Ծնեալ Արիօ կղզին, Տօնկալայի նահանգը Քէրմայի մօտ, աղքատիկ ու անձանօթ ընտանիքի մը զաւակն

էր Մուհամմէտ Ահմէտ, որ թէև ինք-
 չինքը աշրամ կամ մարգարէի ցեղէն
 ուղղակի սերող շառաւիղ կը հռչակէր,
 ո՛չ ոք՝ այն խաւարեալ և նախապա-
 շարեալ աշխարհին մէջ՝ կը շահա-
 գրգուռէր կամ հետամուտ կ'ըլլար
 իմանալու թէ ո՞ր տափճան արժա-
 նահաւատ էր անոր ինքնակոչ պատ-
 տանունի յաւակնութիւնը:

Մուհամմէտ-Ահմէտ, սակայն, առ
 հառարակ ճանչցուած էր իբր Տօն-
 կօլացի: Հայրը, որ սովորական հին
 գլուխ Մուսի (մուլլա) մընէր, կանուխէն
 իրզաւակը ընտելացուցած էր Ղուրանի
 ընթերցանութեան ու գրականու-
 թեան, և դեռ մանուկ հասակին մէջ
 իր հետ տարած էր զայն 'ի խար-
 թում: Փոքրիկն Մուհամմէտ կ'ուսա-
 նէր հոն յարստամ, օրքան զօր կ'ա-
 ճէր ու կը զարգանար, մանաւանդ ի
 բնէ օժտուած ըլլալով ուսման և
 աստուածարանութեան տրամադրու-
 թեամբ, սուղ ժամանակի մէջ սիրելի
 հանդիսացաւ իր վարդապետին, ան-
 ուանի և գերազատուելի շէյխ Մու-
 համմէտ Շէրիֆի՝ որ Սամակիս քա-
 րիզաւ կոչուած աղանդին գրօշակիր-
 ներէն էր:

Ապա Մուհամմէտ-Ահմէտ գնաց
 առանձնացաւ Ապպա կղզին, Ապի-
 տակ Նեղոսի ափունքը՝ Քալաի մօտ,
 շրջապատուած խումբ մը անձնուրաց
 կրօնամուլ աշակերտներէ, ու հաս-
 ինքը և իր աշակերտները իրենց օ-
 րապահիկը կը ճարէին երկրագործու-
 թեամբ, նաև յաճախ նպատաներ ըն-
 գունելով աստուածավախ անձերէ:
 Մագերը կէս ամիլած, ինչպէս եր-
 բեմն հետտուն Գիմնութէն, գետափի
 մամուսպատ անձաւին մէջ կը ճգնէր,
 կուլար ու կ'աղօթէր ապագայ Մահ-
 տին, օրերով ծագակնելով և երբեմն
 այցելութեան երթալով Մուհամմէտ
 Շէրիֆի, իր սիրելի զաստիարակին՝
 բանիւ բերանոյ իր անձնուիրութեան

հաւատիրը մատուցանելու անոր:

Բնագր թէ չարագուշակ գիպուած,
 պատահեցաւ որ Մուհամմէտ Շէրիֆ,
 ինչպէս սովորութիւն է Սուանի մէջ,
 իր խաւարամիտ մուլլաները և աշա-
 կերտները համախմբած՝ կը կատա-
 րէր իր որդւոյն թըրխտման հանդէսը,
 ուր ազնուօրէն կը թոյլատրէր իր
 հիւրերուն ըստ հաճոյս գուարճանալ,
 պարել, կարճաւել և . . . ա՛լ հասկցիր,
 յայտարարելով միանգամայն թէ՛ ինք
 յանուն ամենազոր՝ Ալլահին և ի հե-
 ճուկս կրօնական պատուիրանաց՝ պի-
 տի ներէր անոնց ամեն օրինազան-
 ցութիւնները որ անխուսափելի են
 սուտանական խենեշ խրախճանաց
 մէջ: Երբ այս գայթակղական արար-
 քին լուրը մեր աստուածաշնորհ Քու-
 քի Ահմէտի ականջը հասաւ, շատ
 դժգոհ մնաց, համարձակօրէն խոս-
 տովանելով բարեկամներուն թէ՛ օրի-
 նագանցութիւններ — որքան ալ ինք-
 նին փոքր ըլլան — անհաճոյ են աստ-
 ուածային կամաց, և թէ ո՛չ ոք այս
 աշխարհի մէջ, ըլլայ շէյխ էլ թա-
 րիքան ինք, իրաւասութիւն չ'ունի
 զայնս թոյլատրելու:

Լսեց Մուհամմէտ Շէրիֆ թերուս
 աշակերտի մը սոյն ըմբոստ գիտու-
 զութիւնները զորս չ'կրցաւ մարտել:
 կրակ ու բոց կարծեցաւ, զայրացաւ
 և բացասութիւն պահանջեց անկէ
 որ՝ 'ի ներկայութեան բոլոր հրա-
 ւիրեալներուն՝ զվճացած 'ի խորոց
 հոգւոյն, ախթապարտ ու գլխիկոր
 ծունկի եկաւ և արտասուալից աչօք
 թողութիւն խնդրեց վարժապետէն իր
 մեղացը համար:

«Մեղայ քեզ՝ առաջի Աստուծոյ և
 մարդկան: Ներէ՛ ինձ, կը սրտաշարժ
 քեզ աչք յ'արտասուս, ո՛վ Տէր իմ,
 ներէ՛ զվճացեալ մեղաւորիս»:

Կարծրասիրտ էր Մուհամմէտ Շէ-
 րիֆ, բնու չ'աննաց անոր աղերաս-
 ցին պաղտամաքներուն, անքան ու-

հուրք էր վերաւորեալ անձնասիրութեան մէջ ու կառուցած մեծաւորի մը յատուկ գոռոզ զայրոյթով զոր չէ կրցաւ ամօքել մեղապարտին թախանձագին աղերսը:

«Եալլա՛ եմ՛ի մին հէնա, եա՛ իպն էլ քէլ-պ, եա՛ Տօնկօլավի, եա՛ իպն քաֆը»

«Կորի՛ր առջևէս, շան ծնունդ, վատ Տօնկօլայի, որդի՛ անհաւատի»:

Ալ չ'կրցաւ հանդուրժել խեղճ Փութին Մուհամմէտ Ալմէտ՝ այս անողորմ՝ հայհոյութիւնները լսելով. անզատ՝ մը եւս լացաւ զառնագին, այլ

ի զուր, ու վշտաբեկ գնաց զիմեց Մէտալիա տարբեր զաւանանքի մը պետին՝ չէյիս իւլ խօրէչի որ սիրա-յօժար ընդունեց զինք իր կարգին մէջ: Այս գէպքը որ կայծակի արագութեամբ Մուտանի չորս կողմը տարածուեցաւ, անէժքներ սեղացուց աւիւծասիրտ Մուհամմէտ Շէրիֆի գրէխուն և անունը բարձրացուց Մուհամմէտ-Ալմէտի որ այնքան խոնարհամտութեան ապացոյցներ տուած էր և որ ա՛լ օրուան մարդը պիտի ըլլար, Մուտանի երկնառաք հերոսը: (Շարունակելի) Ս. Օ.

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ք Ր Ո Ն Ի Կ

Աղեխասկըրխոյ նորընտիր թագա-կան խորհուրդը կազմուած է հետեւեալ Պատուարժան անդամներէ.

- Վ. սե. Պօլոս բաշա հուպար, Ատենապետ Տիար Արմենակ Կամարապետ, Գեր. Ատեն.
- » Ալերսան Ճէվախրճեան, Ատենգպար.
- » Գրիգոր Մելքոնեան, Գ. անձապետ
- » Պերճ Օհանեան, Ժառնգ. գարձ. Խրճ.
- » Միքայիլ Պէյ Ր. խեան
- » Գեօրգ Իփեյրեան

Ընտրութիւնը կատարուած է 199 ազգայնոց մէջէն 166 անձանց քուէարկութեամբ, և, Գե. Տեղապահ Սրբազանի ու Վսեմ. Պօլոս բաշայի մասնաւոր ջանքերովը, նուազ կուսակցամուլ և քիչ շատ անկախ անձանց վրա: Յաջողութիւն ու յարատեւութիւն:

— Ասիտրի նահանգին Վերին Եգիպտոս) մէջ Կանաւոյ Տեղնա ազարակը (ապատիցէ), որ կը պատկանի Գահրէի ազգ. վարժարանին, այս անգամ՝ Ֆէտաններ 205 զրշ.ի վարձու տրուած է, որոյ նախընթաց տարիներու վրայ տարեկան 160 սակւոյ հասցթի յուեղուած մը կ'ունենայ ազգ. վարժարանը: Միւս կողմէն ալ կ'իմանանք թէ՛ ուրի, թեկնածու մը, անգլիացի, նոյն ազարակն

ուզած է ֆէտանը 250 զրշ.ի վարձքով, բայց ածուրդը փակուած ըլլալուն մերժուած է այս վերջին առաջարկը: Ինչ որ ալ ըլլայ նորընտիր Քազ. ժողովոյ այն կարգադրութիւնը՝ գնհունակութեամբ արժանի է բողոքատուած այն կարգադրութեան զոր ըրած էր Տիար Գրիգոր Եղիաեան, ֆէտանը 175 զրշ.ի վարձու տալով:

Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի խառն ժողովը հրատարած է Ապրիլ 16ին, այն պատճառաւ որ իր պաշտօնաւարութեան երկամեայ շրջանը կը լրանայ Մայիս 1ին: Հրատարակուած պատճառները մէկ չ'են. կարգ մը խնդիրներ, Բ. Կրսն մատուցուած, գրեթէ մերժուած են կամ ձգձգուած ստաի, դժգոհութիւններ ու գանդաաներ ազգին կողմէն: Սուլթանը չ'պիտի հաճիրտօնել նոր ժողովոյն ընտրութիւնը, և Պատրիարքարանը կը գտնուի նեղ գրութեան մէջ. հետեւաբար Հայկական խնդիրը — քանի մ'երուպական թերթերու կարծիքն է — պիտի վերջացուի, իբր թէ Գումպարուի պարիսպներուն մէջ փակուած Պատրիարքարանի մը վարչական խնդիրն ըլլար այն:

ՎԱՆԱՅ ԵՒ ԶԷՅԹՈՒՆԻ ՍՈՎԵԼՈՑ Ի ՆՊԱՍՏ

Ուրախութեամբ կ'աւետենք մեր ընթերցողներուն թէ՛ ֆիլիսիկի նախընթաց թիւին մէջ՝ ըրած մարդասիրական կոչումնիս ապարդին չը մնայ: Եգիպտահայ Աշնուաշարք Տիար Պետրոս Պ. կարապետեան, որ քաջածանօթ է իր առատաձեռնութիւններով, կիպրոսի և իգմիրի որբանոցներուն մէջ՝ ութ հայ որբ ու որբուհի պահելով ու դաստիարակել տալով իր անձնական ծախքով, այս անգամ, 50 անգլ. ոսկոյ գումար մը նուիրեց ի նպատոս վանայ և Զէյթունի սովելոց: Այդ գումարէն 30 ոսկին այսօրուան թղթատարով զբրկուեցաւ Կ. Պոլիս, Աղբ. Պատրիարքարանը, իսկ 20 ոսկին, Զէյթունի Առաջնորդ Գեր. Տ. կարապետ եպիսկոպոս Քէչեանի:

Յիշեալ պատուական ազգայինը կը յայտարարէ նաև որ ինք պատրաստ է ընդունելու և ապահով միջոցներով Զէյթուն հասցնելու ամէն նպատոս որ կը շնորհուի բարեսիրտ նուիրատուներէ, և որոնք պիտի հրատարակուին ֆիլիսիկի մէջ: Այս առթիւ կը փութանք մեր շնորհակալութիւնները հրապարակաւ յայտնել յիշեալ մեծանուն հայրենակցին, որուն օրինակին անտարակոյս պիտի հետեւին ուրիշ ո՛չ նուազ զիւրակեցիկ եգիպտահայեր ալ:

Պատիւ Սանտեսան ընկերութեան ծխախոտի գործարանին հայ աշխատատրներուն որ իրենց մէջ 205 դրշ. ողջ հանգանակելով յանձնած են Տիար Գ. իսագուլեանի, վանայ սովելոց զրկուելու համար:

ՀՍԿԱՅ ԸՆՏԱՆԻ Ք Ս Ը

Թերևս անհաւատալի թուի որ այսօր վեց եղբայրներ և քոյրեր կ'ապրին, որոնց սերունդը կը բաւէ կըրկնապատկելու Ուինսօրի բազմամարդութիւնը, և Քարմարտէնի բոլոր բնակչաց թիւէն շատ աւելի է: Այս բազմածին զաւակաց հայրը Ուէոյ անուն մարդ մ'էր, առաջին գաղթականը Քէնթըքի նահանգին Քրմպըռլէնս գիւղին մէջ, որ այժմ գրեթէ ամբողջովին իր սերունդէն կը բաղկանայ:

Քաղմածնութեան դափնին՝ իր անդրանիկ որդւոյն Ճէյսընի, երրորդ անգամին է, որ իր սղջութեանը անսամ է 444 յաջորդներ, բոլորն ալ իրմէ սերած. իր ծննդոցն սկսաւ 19

աղաքներով, որոնցմէ սերեցան 175 թոռներ, 150 թոռնորդիներ և 100 թոռան թոռներ:

Ճէյսընի կրտսերադոյն եղբայրը Մայլէս, 78 տարեկան առոյգ մարդ մ'է, որ քաջատոզլ, ինչպէս իր մէկ զաւակը, ունի նաև շուրջ 400 յաջորդներ, 165 թոռներէ, 150 թոռնորդներէ և 90 թոռան թոռներէ բաղկացած:

«Հօբաքոյր ֆօլի» նահապետ Ուէպին երկրորդ զաւակը, իբրև բաշմածնունդ ծնողք՝ երրորդ կը գտաւ, 10 զաւակ ունէր, 110 թոռներ, 70 թոռնորդիներ, և 40 թոռան թոռներ, կազմելով 230 անհատէ բազկացեալ սերունդ մը: «Ալեգարդ Ուէպ»ի զա-

ւակներէն միայն երեքը կեանք տր-
ւած են սերունդի մը, որ 1000ը
կ'անցնի թուով:

«Հօրաքոյր Սօլի» ուրիշ դուստր մը,
73 տարեկան գործունեայ պառաւ
տիկին մը, 208 անգամէ սերունդ մը
տուած է, պարունակելով առաջին
պորաէն՝ 13, երկրորդէն՝ 80, երրոր-
դէն՝ 63, և չորրորդէն՝ 50: Առջինէկ
զաւակն ազջիկ մը «Հօրաքոյր Լէզգի»
որ 90րդ տարուանը մէջն է, 11 սը-
ղաքներէ, և 90, 60, և 40 համեմա-

տաբար յաջորդական պորաերէ բազ-
կացեալ 201 անհասաներ տուած է:

Կրտսերագոյն ազան ամենէն սա-
կաւաթիւ սերունդ մը տուած է, որ
սակայն 166ի կը հասնի: Ունի 11
զաւակ, 73 թոռ, 50 թոռնորդի և 30
թոռան թոռ: Քէնթըքի բովանդակ
ազգաբնակութիւնը 12,000 հոգի, սե-
րած է այս պատկառելի ընտանիքէն
որ անտարակոյս աշխարհիս մեծա-
գոյն ընտանիքն է:

Վ.Ղ.Է.

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

Լ.նաանի մէջ հազար հոգիէն մէկը
կոյր է:

— Հաստատուած է թէ՛ Լուսնոյ
լեռներէն մէկուն բարձրութիւնը 3ն
հազար սոք է. միս հասարակ լեռ-
ներան բարձրութիւնը կը հասնի 30
հազար սոքի:

— Թուրքիոյ Սոլթանի պալատին
մէջ օրական 20,000 լիպրա հաց
կ'ապտտի:

— Ճարտի մէջ ազոյ վիզէն կախ-
ուած է փքրտիկ առխտակ մը, որան
վրայ պիտուած է ազուն անունն ու բնակա-
վայրը, կոչաւուած ժամանակ զիբրաւ
զանուելու համար:

— Աշխարհի մէջ 3064 լեզուներ

կան, որոնք կը խօսին 1000 տեսակ
կրօնքէ ժողովուրդներ:

— Ես պիտեմ թէ ինչո՞ւ համար
սեւ ազիկներն երջանիկ կ'ըլլան, կը-
սէր օր մը հինգ տարեկան ազիկ
մ'իր մօրը:

— Ինչո՞ւ, հարցոյց մայրը:

— Որովհետեւ մայրերնին չ'են կրնար
անոնց բռն թէ՛ ձեռքերնին անմա-
քոր են:

— Հոս նայէ՛ թորիկ, ի՞նչ կարծիք
ունիս այս նորածին պէպէն վրայ
որ կեռ երէկ բերաւ մեզի բժիշկը:

— Հայրիկ, կը տեսնեմ որ ո՛չ մազ
ունի և ո՛չ սկաւոյ բժիշկը, աղու
տեղ՝ ծերուկ մը բերեր է մեզի:

Ս. Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Քաղաքականութիւնը զործագուի մէջ է, Չատկական այս երջանկաւէտ արձակուրդներուն առթիւ՝ Օրակարգի առաջին ու կարեւոր խնդիրն է Ձեւընկեցութեան Համաժողովոյ գումարումը, որ տեղի պիտի ունենայ ամառայն 18ին ի Լահէյ: Քաղաքական անձնատարութեանց շատերուն կարծիքը նոյն է այս մասին, և գրեթէ ամենքն ալ սկեպտիկ յոսեանսութեամբ մը կը նային անոր: Իրա՛ւ է, ուստի ճառեր պիտի արտասանուին, տիեզերական եզրայրակցութիւնը պիտի հըռչակուի, և ծափահարութիւնք պիտի յաճախեն. բայց ամենն այդ է, ու հոն պիտի մնայ. զործնական արդիւնք մը չ'պիտի տեսնուի: Սակայն արդէն հըռկայաբայլ յառաջդիմութիւն մը չէ՞ տեսնել ինքնակալ մը — որ սակայն ազգուսպէս կրնայ հակառակիլ տիեզերական խաղաղութեան, իբրև բարեպաշտ աւանդապահն ու հաւատարիմ շարունակողը Մեծին Պետրոսի քաղաքականութեան — ձիթենոյ ոտը ձեռքը գալ երեւիլ բոլոր ժողովրդոյ մէջ:

Իսկ որ թագակիրները խաղաղութեան կուսակից են, ժողովուրդները չ'պիտի արգելք հանեն, որովհետև իրենք են որ անդադար դիմած են գէպ ի նոյն վսեմ՝ նպատակը: Ինչ ժամանակ պէտք է մինչև որ իրագործուի բոլոր աշխարհի սղապուրումը, բայց չ'մոռնանք որ այն ցանկաւ տիեզերական խաղաղութեան շարժառիթը՝ գիտութիւնը պիտի բլլայ որ շագիւղ ու երկատրիկալ կը մտնցընէ, և կը ջնջէ հեռատարութիւնները. և ահա՛ կը պակիթ թիւր սահմանագրւիւններուն. ժողովուրդները կը շարունակեն իրարու հետ շաղուիլ իրենց հաղորդակցութիւնները կը սեղմուին

և շահերը հասարակոյ կը դառնան, հակամեծաներն իրարու հետ կ'առնու նստան: Ամեն անց, որ կ'զգայ մարդ իր սեպհական ոյժն ու կոչումը, զոր ունի գործ մը կատարելու համար, միայն տեղական լեզու մը չ'գործածուիր, այլ բոլոր կենդանի լեզուները կը խօսուին հոն, շնորհիւ կրթութեան, որուն բարերար ճառագոյթները կը թափանցեն մինչև հեռատարոյ այն անկիւնները:

Արդէն մտաւորականութիւնը բովանդակ երազայի՛ կը խօսի երեք լեզուները, փրանսերէն, անգլիերէն ու գերմաներէն, բողբերն ու սարազնիքը գէպ ի համաձեւութիւն կը նկրտին առեւտրական յարաբերութիւններով, որոնք որ աւար կը բազմապատկին: Ուստի, այժմէն հասկցուած է թէ՛ պատերազմները՝ կուսող երկիրները միայն չ'պիտի աւերեն, այլ բախնողակ աշխարհը, քանի որ երկաթուղիներով, հեռագիրներով և շագնաւորով միաձոյլ զանգուած մը գործած է այն, ջիզով ու արինով տարապնդուած: Սպառնան, դիտութեան ընձեռած ձեւափոխութիւններով՝ ղընչելի պիտի բլլայ: Ձեւք ըսեր թէ՛ կը գիմենք գէպ ի եզրայրութիւն — սարդ զգացում մը, որուն վրայ բան մը չ'հիմնուիր — այլ գէպ ի հաստատութիւն, ընկերային ոյժ, որ կրնայ հիմքն բլլալ ամենահաստատ շէնքի մը, ամէն:

* * *

Եւ որովհետև ի տրհրդարանի ուրձակուրդները կը շարունակեն խաղաղիկ ննջել նախարարութեանց կակուղ բարձիկներու վրայ, կը համարձակինք Ձեւընկեցութեան Համաժողովի անգամներուն տալ հետեւեալ պարզ գաղափարը. «Թող իրենք համոզեն

իրենց կառաւարտութիւննեղ, որ արտաբաւարարները մշտապէս բոլոր Այո կերպով, ամեն պատերազմի վտանգ կը վերնաց, որո՛վհետեւ ո՛չ թէ ժողովարդները այլ զանոնք կառավարող աւիւծները, վարդերն ու անաւի՛ երն են որ պատերազմը կը յայտարարեն:

Թէեւ հիւսկայ քաղաքականութիւնն իր օգտախառնութեան շրջանը կը բարձրէ, գիտութիւնը սակայն, ձեռքերը ծալած նստած չէ: Ահա՛ լար մը, որ բժշկագիտական շրջանակներու մէջ ո՛չ նաւազազն կ'հանելու բնութիւնն ածնի:

Բարիցի Տարթ. որ Պրա կը մեկուսացնէ ու կը մշակէ Քանցիկիցի (Cancez) մակար յծր, որ ստորին սրգ մ'է Ասիս մեկէն ընտանիքէն Ահա՛ գիւտ մը, սոսկ մեծ յառաջգլ մութիւն բրած կ'ըլլայ քաղցիկի գարմանումն ու բաժումը:

Հիւսկայ կը մնայ յայժեւ թոքոստի միքրոսին, սրտէսցի գիտութիւնը արտակատէ բարձր հիւանդութեանց յուսանք թէ՛ արտ վերջին յայժեւութիւնը որ ի հարկէ խաղաղասէր է. շատ չ'պիտի աշանայ, քանի որ Ձէնընկիցի վեհանս Համաժողովոյն ներկայանայի խնդիր մը չէ:

Այնտեհետեւ կարգը կուգայ ընկերային հարցին, որուն բաժումը ահագին խոչընդոտներու պիտի բախի, ցորչափ շարունակէ Տէրութեանց երարու հակամարտ շահերուն գոյութիւնը, և ցորչա՛փ չմարի աննշն ապօրինի արտապետութեանց և երկրակալութեանց Կիտութիւնը թերեւս ըլլայ ձեռնու իմաստասէր հանձարներուն, որ յայժեւն թշուառութեան միքրոսպիտ սլ: Անգամ մը որ անցնի՛ք այս վերջին շրջանէն, պիտի գայ նորէն Ասիկգարը թողաւրել երկրագնդին վրայ, և վերջապէս արաբած պիտի ըլլանք նո՛ւն երկրաւոր Դչախտին:

Մեր փոխադարձ համակրանաց հեռմեր շնորհակալեաց զգայումները կը հաշորդենք ամեն արտասահման թերթերուն ու հանդէսներուն, որոնք աշուտաբար ողջունեցին Փիլիսիկի երեւումն, և քաջալերեցին զայն իրենց ջերմագին շնորհատուութիւններով: Այս առթիւ պէտքը կը տեսնենք կրկնելու ինչ որ արդէն գրած ենք հանգիստ Ա. թիւին մէջ, ան է, չ'պիտի գրայինք անձնական կիրքերէ ներշնչուած յողուածներով: Եթէ Փիլիսիկի ուղղութիւնն ու նպատակը բըննադատելու փոփազողներ ըլլան, պատրաստ ենք անոնց կարծիքներն ու գաղափարները մեր թերթին մէջ հրատարակելու, բաւական է որ այդ գրողները՝ վարակուած չ'ըլլան կուսակցական արգահատելի աշտերով: Մենք պիտի չ'չեղինք երբէք մեր ծրագրէն կոխատելով ու անցնելով ամեն խոչընդոտ, որ ճամբուն վրայ կ'ընայ ներկայանալ:

Կը յուսանք թէ ներկայ յայտարարութիւնը կ'ընայ ծառայել իրրե ազգարարութիւն կարգ մը գրողներու, որոնք միայն գրելու եռանդէն մղուած՝ թղթակցի հովեր կանոնն և իրենց պահանջկատութիւնն ու յաւակնատութիւնն ա՛յնչափ առաջ կը տանին որ հանդէսին ամբողջ էջերն իրենց իմաստակալութիւններով լեցնելու կը փորձեն:

Տպարանի փոփոխութեան և Չատկական տներու պատճառաւ Թիւ 3ի հրատարակութիւնը քիչ մ'ուշանալուն՝ Փիլիսիկի արգոյ ընթերցողաց ներողատուութիւնը կը խնդրուի:

ԹԷՅԻ ՎԱՃԱՐԱՏՈՒՆ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.



48, Շարե Ապս իւլ-Ագիգ, 48

Այն բարեհամբու վաճառատան չափը 20 տարուան գոյութիւնը Պոլսոյ մէջ, այս տարի ալ տեղս մասնաձիւղ մը բացած ըլլալը՝ զօրաւոր տապալցոյց մ'են իր ապրանսոց ազնուութեան, գիներու չափաւորութեան և աւելին, յաճախորդաց գոհ մնալուն. աւելցրնելով այս յատկութեանց վրայ Սէյլանէն, Ճափայէն, Չինաստանէն ու Հնդկաստանէն ընտիր սպորտներու ուղղակի ներմուծելու ստուգելութիւնը, այս կարեւոր հաստատութիւնը կարճ ժամանակի մէջ արժանացած է հանրային համակրանոց և պատիւ կը բերէ տեղւոյն ազգայնութեան:

Պատ. յաճախորդաց աւելի գոհացում տալու համար, վերջերս յատկապէս Լոնտոնէն բերել տուած են ընտիր թէյեր ու մեն եղանակի մանաւանդ ամսառան համար:

Կ'ուզէ՞ք ստուգել ներկայ յայտարարութեան պարունակութիւնը, հաճեցէ՞ք անձամբ երթալ յիշեալ վաճառատունը, որ իբրեւ փորձ՝ ձեր ներկայութեան կը պատրաստուի և կը մատուցուի մէկ, եթէ կուզէք երկու գաւաթ թէյ:

Այն վաճառատունը՝ Տիկին Աննա Ռաֆֆիի յանձնարարութեան վրայ ստանձնած է վաճառել անմահ վիպասանին հայրենաշունչ երկերը. նայնպէս Ազգ. Հիւանդանոցի արկարի թղթերն ընտիր տեսակէ:

ԳԻՃԵՐԱՅԻՆ ԴԱՍԵՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՕՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Իրենց ապագան ապահովցնելու փափաքող հայ երիտասարդներուն յորդոր կը կարգացուի օգուտ քաղել առիթէն, շարաթն երկու գիշեր միայն դալով կեդր. կոթարանն, ուր ամենազիւրին մէթօտով գործնական Տօմարակալութեան գասեր կուտայ հմուտ ու փորձ հաշուագէտ մը, խիստ գոհացուցիչ պայմաններով:

Դիմել Փիւնիկի խմբագրատունը:

ՏՕՔ. ԱՏԱՆԱԲՈՅԺ ԺՈՐԺ ԼԵՎԵԱՆ

Ապսին, Շարե Բուպրի, ԵՍ 55

Կը պատրաստէ կեզժ ակօաներ ամենափափուկ բերաններու և ամէն հատակի յարմար, ամերիկեան ամենափրջին դրութեամբ. վայրկենապէս կը դադրեցնէ ակօայի ցաւերը, նորագոյն մէթօտով կը լեցնէ փտած ակօաներ, ազնիւ ապրանքներով կատարելապէս կը բուժէ լինտերու և բերնի զանազան հիւանդութիւններ: Իր լեցուցած ակօաներուն տակունտութիւնն առնուազն երկու տարի կ'երաշխատորէ:

ԴԵՂԱՐԱՆ 4. ՊՕԼՍՈՅ

Շարս Մօհաւեհ-Ալի Պազարին դիմացը

Խաչատուրեան եզրարց սոյն հաստատութեան մէջ խնամով կը պատրաստուին ու մեն տեսակ դեղորէք չափաւոր գներով ու կը կատարուին հայ մասնագէտ բժիշկներու խորհրդակցութիւններ:

ԵՄԻՈՒ ՏՈՒՆ

Մաթարիս, կայարանէն դէպի հարաւ 1 ժամ հեռաւոր տուն մը, 1 1/4 մէթր երկայն 11 մ. 90 լայն, բարձրագիր, 4000 քառ. մէթր տարածութեամբ պարտէզ, աղիւսէ ցանկապատով, մանտարինի, նարնջի եւլն. ծառերով, ջրհոր Փափագոյները դիմեն Տիար Աեղրաբ Օտապուչեանի:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՒ ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԷԻ

Շարհ Մօհամեզ Ալի փիւնիւնի խելք սր ստունը

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ

ՍՍԲԱՏ ԲԵԲԲԱՏ

Կաւանդուին հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուները, նախակրթական եւ երկրորդական ուսմանց ու գիտութեանց հետ, խնամեալ ազգային դաստիարակութեան մը հիման վրայ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԳԻՐԲ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի եւ չրջակայից գրասէր հոյ հասարակութեան զիբուրիին մը ապու ժաօր՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Դասական, Դպրոցական, Դիտական, Դրամական, Արուեստական, Բանասիրական, Վիպական եւլն.) որ հրատարակուած են եւ կը հրատարակուին Պօլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիլննա, կարելի է զիրաւանաչելի պայմաններով ձեռք բերել՝ զիմեղով Տիար Կ. Նասարդեանի կամ Ի Կեզր. կրթարան:

ԼՏՐԹ. Ն. Պ. ՔԷՂԷՋԵԱՆ

Բժիշկ վիրաբոյժ վկայեալ յ'Աստերիկ ո

Ժամանակիս նորագոյն մէթատէրաւ հասանցի կը բաժէ ներքին եւ արտաքին ամեն տեսակ հիւանդութիւններ:

Իր պաշտօնատեղին, որ կը գտնուի Շարհ Ապա-իւլ-Ալիզի սկիզբը. Գեղարան Օսմանլիի զիմուցի տաղլին շէնքին մէջ, հիւանդներ կ'ընդունուին ամեն օր տաւառեան ժամը 10—12 եւ կէս օրէ վերջ ժամը 3—5 (ը. ե.):

Ազրաա հիւանդներ ձրի կը զարմանուին:

ՎԻՄԱ-ՏՊԱՐԱՆ ԵՒ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՅԼԱՋԱՆ ՏՈՒՓԵՐՈՒ

ՄՆՏԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՑ

ԳԱՅԻՐԷ ԺԱՐՏԷՆ ՐՕՍՍԷԹԹԻ ԽՈՒՂԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԸ. ընկ. դէմը

ՄԱՍՆԱՃԻՂ ԱՂԵՋՍԱՆԿՐԻՈՅ Գաֆէ Բարատլուզլի դէմ:

ԵՐԿԱՅԱՅՈՒՅԻԶԲ ԵԳԻՊՏՈՍԻ ԿԱՐԵՒՈՐ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԷՋ ՓՈՐՈՒՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆՏԻՐ ԳԱՂՂԻԱԿԱՆ ԳՂԱՆԻԿԻ ԹՈՒՂԹԻ

ԵՒ ԲԱԶՄԱԳՈՅՆ ՏՈՒՓԵՐՈՒ ԵՐՈՊԱԿԱՆԻՆ ՅԱՐ ԵՒ ՆՄԱՆ

Երեսուցե աւելի վերջին կատարելագործեալ Տիպար-մեքենաներով կը վիմագրուին ամեն տեսակ գումար գործեր, կը սպուին ամեն լեզուէ գրեր, պրօբլեմներ, լրագիրներ, բրօսքէքիւս, մեկօրանիստ, նամակապուխ, պահարան եւ օրագրերականներ զիրաւանաչելի զներով եւ խիստ մաքուր: